

Հավելված

Հաստատված է Հայաստանի Հանրապետության  
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
2004 թվականի նոյեմբերի 16-ի N149Ն որոշմամբ

## **Հայաստանի Հանրապետությունից Էլեկտրական Էներգիայի արտահանման կարգ**

Սույն կարգը կանոնակարգում է Հայաստանի Հանրապետությունից  
Էլեկտրական Էներգիայի արտահանման գործընթացը:

1. Էլեկտրական Էներգիայի արտահանում կարող է իրականացնել Էլեկտրական  
Էներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձը (այսուհետ՝ Արտահանող), որն  
ունի.

ա) Էլեկտրական Էներգիայի արտահանման պայմանագիր օտարերկրյա գնորդի  
հետ,

բ) արտահանման նպատակով Էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագիր  
Էլեկտրական Էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձի հետ  
(այսուհետ՝ Արտադրող),

գ) արտահանման նպատակով Էլեկտրական Էներգիայի հաղորդման  
ծառայության մատուցման պայմանագիր Էլեկտրական Էներգիայի (հզորության)  
հաղորդման լիցենզիա ունեցող անձի հետ (այսուհետ՝ Հաղորդող),

դ) արտահանման նպատակով հաշվարկային կենտրոնի ծառայությունների  
մատուցման պայմանագիր Էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային  
կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձի հետ (այսուհետ՝  
Հաշվարկային կենտրոն),

ե) արտահանման նպատակով Էլեկտրաէներգետիկական համակարգի  
օպերատորի ծառայությունների մատուցման պայմանագիր Էլեկտրաէներգետիկական  
համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող անձի հետ (այսուհետ՝ Համակարգի  
օպերատոր):

2. Սույն կարգի 1-ին կետի բ) և ե) ենթակետերում նշված պայմանագրերի  
օրինակելի ձևերը կամ պարտադիր պայմանները սահմանում է Հայաստանի

Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

3. Սույն կարգի 1-ին կետում նշված պայմանագրերը ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

4. Արտահանման նպատակով էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագիր չի կնքվում, եթե Արտահանող է հանդիսանում Արտադրողը և արտահանում է իր կողմից արտադրված էլեկտրական էներգիան:

5. Արտահանումը իրականացվում է միայն ներքին շուկայի հագեցվածության դեպքում, երբ էլեկտրաէներգիայի արտահանումը չի հակասում ներքին շուկայի սպառողների շահերին:

6. Ելնելով սույն կարգի 5-րդ կետից, արտահանումն իրականացվում է էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի տարեկան շիռը սահմանափակող Արտադրողների («Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» բաց բաժնետիրական, «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններ) արտադրած էլեկտրաէներգիայի հաշվին:

7. Արտահանման համար էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի, համակարգի օպերատորի և հաղորդման ծառայությունների մատուցման սակագները սահմանում է Հանձնաժողովը:

8. Համակարգի օպերատորը իրականացնում է էլեկտրաէներգետիկական համակարգի տնտեսական կարգավարում արտահանման և ներքին սպառման գումարային բեռնվածքի համար:

9. Էլեկտրաէներգիայի արտահանման նպատակով կարող են ներգրավվել՝

ա) էլեկտրաէներգիայի ներքին պահանջարկի համար էլեկտրաէներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձի (այսուհետ՝ Բաշխող) կողմից պատվիրված արտադրող հզորությունները.

բ) էլեկտրաէներգիայի արտադրության տարեկան պլանում չներգրավված և Բաշխողի կողմից չպատվիրված արտադրող հզորությունները:

10. Սույն կարգի 9-րդ կետով նախատեսված դեպքերում Արտադրողի կողմից Արտահանողին առաքված էլեկտրաէներգիայի ամսական քանակը ( $W_{սա}$ ) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{ու}} = W_{\text{Հու}} + \Delta W_{\text{Հու}} + \Delta W_{\text{բու}}$$

որտեղ՝

$W_{\text{Հու}}$ - արտահանման կետում Հաղորդողի կողմից Արտահանողին հանձնված էլեկտրաէներգիայի քանակությունն է,

$\Delta W_{\text{Հու}}$ - հաղորդման ցանցում արտահանված էլեկտրաէներգիայի կորուստների մեծությունն է,

$\Delta W_{\text{բու}}$ - բաշխման ցանցում, արտահանված էլեկտրաէներգիայի տարանցմամբ պայմանավորված, էլեկտրաէներգիայի կորուստների մեծությունն է:

Հաղորդման ցանցում արտահանվող էլեկտրաէներգիայի ( $\Delta W_{\text{Հու}}$ ) կորուստները հաշվարկվում են Հաշվարկային կենտրոնի կողմից, հիմք ընդունելով հաշվարկային ամսում հաղորդման ցանցերի փաստացի կորուստների տեսակարար (տոկոսային) մեծությունը: Բաշխման ցանցում արտահանման տարանցմամբ պայմանավորված ( $\Delta W_{\text{բու}}$ ) կորուստները հաշվարկվում են Հաշվարկային կենտրոնի կողմից ըստ Բաշխողի ցանցերում փաստացի բացարձակ կորուստների համամասնական տարանջատման սկզբունքի:

11. Սույն կարգի 9-րդ կետի ա) ենթակետով նախատեսված դեպքում Արտահանողի կողմից Արտադրողին վճարման ենթակա ամսական գումարը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \eta_w * W_{\text{ու}} + (\eta_{Nw} - \eta_{Nuy}) N_{\text{անվ}} * \frac{t_{\text{արտ}}}{t_{\text{ամս}}}$$

որտեղ՝

$\eta_w$ ,  $\eta_{Nw}$  և  $\eta_{Nuy}$ - համապատասխանաբար էլեկտրաէներգիայի (կՎտժ), աշխատանքի մեջ և սառը պահուստում գտնվող հզորությունների (կՎտ)՝ Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնային դրույքներն են.

$N_{\text{անվ}}$ -արտահանումը ապահովելու համար սառը պահուստի վիճակից վերագործարկված ագրեգատի անվանական հզորությունն է.

$t_{\text{արտ}}$ -հաշվարկային ամսվա ընթացքում վերագործարկված ագրեգատի արտահանման ապահովման համար աշխատած ժամերի քանակն է.

$t_{\text{ամս}}$ - հաշվարկային ամսվա ժամերի քանակն է:

Աշխատանքային և պահուստային հզորությունների միևնույն դրույքի դեպքում Արտահանողը վճարում է միայն էներգիայի դրույքով:

12. Ներքին պահանջարկի ապահովման նպատակով սույն կարգի 9-րդ կետի ա) ենթակետով նախատեսված հզորությունների օգտագործման անհրաժեշտության դեպքում Համակարգի օպերատորը դադարեցնում է արտահանումը:

13. Սույն կարգի 9-րդ կետի բ) ենթակետով նախատեսված դեպքում արտահանումը դադարեցվում է այդ սարքավորումների անաշխատունակության դեպքում, եթե էլեկտրաէներգետիկական համակարգը հնարավորություն չունի շարունակել արտահանումը ներքին սպառման համար նախատեսված պահուստային հզորությունների հաշվին:

Եթե էլեկտրաէներգետիկական համակարգը հնարավորություն ունի պահուստային հզորությունների հաշվին շարունակելու արտահանումը, ապա այդ հզորությունների պատվիրատու հանդիսացող Բաշխողի վճարը Արտահանողի հետ էլեկտրաէներգիայի առավաճառքի պայմանագիր կնքած Արտադրողից պակասեցվում է հետևյալ բանաձևով հաշվարկված չափով՝

$$\mathbf{ՊՎ} = \mathbf{\eta_{Nայ}} \frac{\mathbf{N_{անվ}} \cdot \mathbf{t'_{արտ}}}{\mathbf{t_{անվ}}}$$

որտեղ՝

$N_{անվ}$ - արտահանման համար ներգրավված ագրեգատի (բլոկի) անվանական հզորությունն է:

$t'_{արտ}$ -հատուկ արտահանման համար գործարկված սարքավորման անաշխատունակության ժամանակահատվածն է (ժամ), որի ընթացքում արտահանումը իրականացվում է ներքին սպառման հուսալիությունը ապահովող պահուստներից:

14. Արտադրողի կողմից Արտահանողին էլեկտրաէներգիայի առաքումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում այդ Արտադրողի համար Հանձնաժողովի կողմից սահմանված էներգիայի և հզորության սակագնային դրույքներով:

15. Եթե Արտադրողը արտահանման նպատակով էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրեր է կնքել մի քանի Արտահանողների հետ միևնույն պայմաններով՝ սույն կարգի 9-րդ կետի համաձայն, ապա Արտահանողների համար առանց խտրականության գործում են միևնույն սակագները:

16. Արտահանողի հետ արտահանման նպատակով էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագիր ունեցող Արտադրողը իր կողմից հաղորդման կամ բաշխման ցանց առաքված և արտահանված էլեկտրաէներգիայի քանակները հաշվեկշռելու համար պարտավոր է Բաշխողի հետ կնքել «էլեկտրաէներգիայի առուվաճառքի լրացուցիչ (հաշվեկշռող) պայմանագիր», որի օրինակելի ձևը կամ պարտադիր պայմանները սահմանում է Հանձնաժողովը: Տվյալ հաշվարկային ժամանակահատվածի համար, Արտադրողի կողմից Բաշխողին առաքած էլեկտրաէներգիայի քանակությունը ( $W_{բ}$ ) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{բ} = W_{առ} - W_{աւ}$$

որտեղ՝

$W_{առ}$  - Արտադրող- Հաղորդող, Արտադրող-Բաշխող և Արտադրող-սպառող սահմանազատման կետերում Արտադրողի կողմից առաքված էլեկտրաէներգիայի գումարային քանակությունն է:

Եթե  $W_{բ}$  բացասական մեծություն է, ապա էլեկտրաէներգիայի այդ քանակը համարվում է Արտադրողի կողմից Բաշխողից գնված էլեկտրաէներգիա, որի դիմաց վճարը Արտադրողի կողմից իրականացվում է էլեկտրաէներգիայի քանակը նույն սակագնային դրույքով ( $դ_{\text{բ}}$ ), ինչը գործում է պայմանագրով Արտադրողի կողմից Բաշխողին առաքված էլեկտրաէներգիայի համար և անկախ նրանից, թե ինչպիսի սակագին է սահմանված արտահանման նպատակով էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրում:

17. Սույն կարգով չկարգավորված հարաբերությունները կանոնակարգվում են սույն կարգի 1-ին կետով նախատեսված պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով: